ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

N 594
07 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 102-Ա և 104-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 102

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀօրենքի 14-րդ հոդվածով և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի 11-րդ կետով՝
որոշում եմ.

1.2019 թ. նոյեմբերիի 29-ին հայտարարել մրցույթներ ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար:
1)ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետների (ծածկագիր՝3.3-1 և 3.3-2) մրցույթը կայանալու է ս/թ նոյեմբերի 29-ին՝ ժամը 10:00-ին և 12-00-ին:
2.Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:
3.Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Ռուզաննա Շահվերդյանին:
4.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1):

2-րդ կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ՝

կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

աջակցում է մշակութային, պետական, ազգային տոների հետ կապված միջոցառումների անցկացմանը.

աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

կազմակերպում է գրադարանի գործունեությունը.

նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում է մշակութային, պետական, ազգային տոների հետ կապված միջոցառումներ.

աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակույթային հուշարձանների պահպանությանը.

աջակցում է համայնքի հանրակրթական դպրոցներում մշակութային, պետական, ազգային և այլ տոների հետ կապված միջոցառումների անցկացմանը.

իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2-րդ կարգի մասնագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

բ) << Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանում և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ (ք.Թումանյան, հեռ.՝ 098-04-80-46) և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (Վանաձոր, Հայքի հրապարակ 1, 1-ին հարկ, հեռ.՝0322- 2-21-04):

Մրցույթը կկայանա 2019թ նոյեմբերի 29-ին ժամը 10.00-ին՝ Թումանյանի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019թ. նոյեմբերի 14-ը:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-2):

2-րդ կարգի մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ՝

կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

աջակցում է մշակութային, պետական, ազգային տոների հետ կապված միջոցառումների անցկացմանը.

աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում է մշակութային, պետական, ազգային տոների հետ կապված միջոցառումներ.

կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը,ինչպես նաև իրականացնում է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

2-րդ կարգի մասնագետի պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

բ) ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու կարգի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> <<ՀՀ վարչական իրավախախտումների մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12–րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև

զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանում և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ (ք.Թումանյան, հեռ.՝ 098-04-80-46) և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (Վանաձոր, Հայքի հրապարակ 1, 1-ին հարկ, հեռ.՝0322- 2-21-04):

Մրցույթը կկայանա 2019թ նոյեմբերի 29-ին ժամը 12.00-ին՝ Թումանյանի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019թ. նոյեմբերի 14–ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 103-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ,Ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ,3-ՐԴ ՓՈՂՈՑ,1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ,ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 42,43-րդ հոդվածներով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ,10-րդ,52-րդ և 53-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14,3 հոդվածով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/062010 թվականի թիվ 186-Ն հրամանով և ՀՀ ԱԳԿ կոմիտեի N՝ Կ-26082019-06-0088 կասեցումը ,ՀՀ կառավարության 29/06/2006թ. թիվ 1084-Ն որոշումը՝ որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի, ք.Թումանյան,3-րդ փողոց,1-ին նրբանցք,թիվ 13 հասցեում գտնվող կաթսայատան զբաղեցրած 0.01936հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը կադաստրային քարտեզում՝ ՀՀ կառավարության 29/06/2006թ. թիվ 1084-Ն որոշման հիման վրա՝փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության տնամերձ գործառնական նշանակության հողամասից որպես արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների, հողամասի գործառնական նշանակությունը հաստատել արտադրական կառուցապատման:

2.Պետական գրանցման համար հաստատել Թումանյան համայնք, ,ք.Թումանյան,3-րդ փողոց,1-ին նրբանցք,թիվ 13 հասցեի հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների արտադրական կառուցապատման հողամասի:

3.Տալ համաձայնություն քաղաքացի Լեոնիդ Մուքաելյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում ստացած հողամասի սահմանային չափերի և մակերեսի փոփոխության՝ համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

4.Հողամասի սահմանները որոշվում են համաձայն որակավորված անձի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված կից ներկայացվող հատակագծի:

5.Հողամասը փոխանցել Լեոնիդ Մուքաելյանին հետագա օգտագործման դեպքում հողամասը կադաստրային արժեքը վճարելու պայմանով:

6.Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 104-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 21-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 56-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝ որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.
1/Հախվերդյան Հովակիմ - ք.Թումանյան 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/Մաթևոսյան Մարիետա - ք.Թումանյան 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/Սարգսյան Գայանե - ք.Թումանյան 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/Հովհաննիսյան Արա - ք.Թումանյան 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/Սարգսյան Հայկուշ - ք.Թումանյան 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/Մաթևոսյան Սուսաննա - գ.Ահնիձոր 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/Սահակյան Անահիտ - գ.Լորուտ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/Խառատյան Հասմիկ - գ.Լորուտ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
9/Սարգսյան Մարինե - գ.Մարց 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
10/Սարգսյան Մանուշակ - գ.Մարց 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
11/Ղազարյան Հրանուշ -գ.Մարց 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
12/Թորոսյան Արտյոմ- գ.Քարինջ2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
13/Քոչարյան Նաիրա - գ.Քարինջ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
14/Վանյան Լաուրա - գ.Քարինջ 2019թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ